ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր

ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԵՈՊԱԳԱՑԻՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը խոր ազդեցություն են թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության բոլոր շերտերի վրա: Այս խնդրին մենք անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում, հատկապես «Գրիգոր Նարեկացին եւ նորպլատոնականությունը»[1] աշխատությունում, բայց ի հայտ են եկել բնագրագիտական եւ տեսական բնույթի նոր փաստեր, որոնց հարկ է անդրադառնալ:

Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերն ընդունված է համարել Ե-Զ դարերի հեղինակի գործեր:

Դիոնիսիոս Արեոպագացին Պողոս առաքյալի աշակերտն էր: Նրան վերագրվող այս երկերի մասին առաջին անգամ հիշատակվում է 532 թ., Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում, ուր միաբնակները երկաբնակների հետ վիճաբանելիս, իբրեւ մեծ հեղինակության, հենվում են Դիոնիսիոսի երկերի վրա: Սկսած այդ թվականից՝ հեղինակի իսկությունը կասկած է հարուցել, եւ այդ վեճերը, հաճախ անպտուղ, շարունակվում են առ այսօր:

Ժամանակակից ուսումնասիրողներից ոմանք, շեշտադրելով այս խորհրդավոր երկերի բուն էությունն ու նշանակությունը, այն դիտարկում են իբրեւ միեղեն մարդ – ստեղծագործություն, որի խորհրդավոր հեղինակը ներհյուսվել է սրբազան բնագրերի հետ:

«Ժամանակակից քննադատները Կեղծ Դիոնիսիոսի անձի իսկության եւ նրա երկերի գրության ժամանակի շուրջ որեւէ համաձայնության չեն գալիս եւ խճճվում են ամենաբազմազան վարկածների մեջ: Քննադատական ուսումնասիրությունների տատանումները Գ-Զ դարերի միջեւ ցույց են տալիս, թե որքան անճիշտ են տեղեկություններն այս խորհրդավոր ստեղծագործությունների ծագման մասին: Բայց ինչպիսին էլ լինեն բոլոր այդ ուսումնասիրությունների արդյունքները՝ ոչնչով չեն կարող նսեմացնել «Արեոպագիտների» աստվածաբանական նշանակությունը: Այս տեսանկյունից այդքան կարեւոր չէ, թե ով է դրանց հեղինակը. այս հարցում հիմնականը՝ Եկեղեցու կարծիքն է բուն ստեղծագործությունների բովանդակության մասին եւ այն, թե ինչպես է նա օգտվում դրանցից: Չէ՞ որ Պողոս առաքյալը, հղելով Դավթի սաղմոսին, ասում է. «Մեկը վկայում է մի տեղ...» (Եբր. Բ. 6), դրանով ցույց տալով, թե որքան երկրորդական է հեղինակի հարցը, երբ խոսվում է Սուրբ Հոգով ներշնչված բնագրի մասին: Իսկ ինչ որ ճշմարիտ է Սուրբ Գրքի համար, նույնքան ճշմարիտ է Եկեղեցու աստվածաբանական ավանդույթի համար»[2]:

Խորհրդավոր այդ բնագրերում քրիստոնեակ՛ան աստվածաբանությունը ներհյուսված է նորպլատոնական փիլիսոփայության հետ: Դիոնիսիոս Արեոպագացին Ընդհանրական

1 Երեւան, Նաիրի, 2004:

2 Տե՛ս **Вл. Лоский**, Очерк мистического богословия Восточной церкви, в книге “Мистическое богословие”, “Путь к истине”, Киев, 1991, էջ. 108-109. Այս մասին տե՛ս նաեւ **Дионисий Ареопагит**, Сочинения, **Максим Исповедник**, Толкования (пер. Г. М. Прохоров), изд. “Алемейя”, Санкт-Петербург, 2002, էջ 5-25:

եկեղեցու սուրբ հայրերից է՝ հայրաբանության վերջին շրջանի ներկայացուցիչ: Նա նաեւ արեւելաքրիստոնեական միստիկայի փիլիսոփայական-հայեցողական դպրոցի հիմնադիրն է համարվում, թեեւ նրա երկերն ընդգծված գեղագիտական բնույթ ունեն:

Հայ իրականության մեջ Դիոնիսիոսը համարվում էր եկեղեցու 12 գերագույն հեղինակություններից մեկը եւ, իբրեւ միաբնակության հետեւորդ, օգտագործվում էր երկաբնակության դեմ դավանաբանական պայքարում: Նրանից բազմաթիվ քաղվածքներ կան «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում:

Այս երկերը վիթխարի ազդեցություն են թողել Միջնադարի եւ Վերածննդի գեղագիտական մտքի եւ մշակույթի զարգացման ընթացքի վրա: Հայ մշակույթի վրա այդ զորեղ ազդեցությունը նկատելի է Ը դարից սկսած՝ դրանց թարգմանությունից անմիջապես հետո: Ինչպես հայտնի է, այս երկերը 718 թ. թարգմանել է Ստեփանոս Սյունեցին՝ Ե-Զ դդ. հայ հունաբան դպրոցի ավանդների շարունակողը: Դիոնիսիոսի ազդեցությունն արդեն իսկ նկատելի է նրա երկերի վրա: Այս երկերն իրենց կարեւոր տեղն ունեն հայ ձեռագրական ավանդույթի մեջ: Դրանք այն եզակի բնագրերից են, որ մեզ են հասել հարյուրից ավելի ձեռագրերով (հիսունից ավելի օրինակներ պահվում են միայն Մաշտոցի անվան Մատենադարանում):

Դիոնիսիոս Արեոպագացու ազդեցությունն ակնառու է Նարեկյան դպրոցի բոլոր ներկայացուցիչների վրա: Ինչպես պարզվում է Անանիա Մոկացու թղթերից, նրա վրա էր հիմնվում Խոսրով Անձեւացին՝ եկեղեցական-բարենորոգչական իր ծրագրերում[3]: Դիոնիսիոսի ազդեցությունն ակնհայտ է Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության եւ ստեղծագործական փորձի վրա, որից էլ այն անցել է Գրիգոր Նարեկացուն[4]:

Նրա դավանաբանական հայացքները մեծապես օգտագործվել են նաեւ X դ. հայ դավանաբանության մեջ: Դրանցից քաղվածքներ են զետեղված Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դավանաբանական երկում, ուր Անանիա Նարեկացին նրան կոչում է «Սուրբ Դիոնիսիոս Արիսպագացի՝ աթէնական փիլիսոփայ եւ գերակատար ճարտասան»[5]: Այս բնորոշումը հույժ հետաքրքրական է, քանի որ ակնարկ է հեղինակի ճարտասանական ոճի, նրա փիլիսոփայական երկերի գեղագիտական-գեղարվեստական ուղղվածության մասին, որին մենք կանդրադառնանք:

Վերջին շրջանում բնագրագիտական հետազոտությունների շնորհիվ Գրիգոր Նարեկացու մատենագրական ժառանգության պատկերն առավել ամբողջացավ՝ ներառելով մի քանի մեծարժեք ասքվածաբանական-դավանաբանական, մեկնողական-խրատական բնույթի երկեր, որոնցից մենք հիմնականում կանգ կառնենք «Ճառ սրբոյն Գրիգոր Նարեկացւոյ ասացեալ» երկի վրա, որը տրամախոսական-իմաստասիրական խորք ունի եւ համալրում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության պատկերը՝ նոր լույս սփռելով նրա մի շարք կողմերի վրա: Առավելապես այս երկում են ի հայտ գալիս Դիոնիսիոս Արեոպագացու զորեղ ազդեցությունները Գրիգոր Նարեկացու ասքվածաբանական-բանաստեղծական համակարգի վրա: Քանի որ նյութը շատ ընդգրկուն է, Դիոնիսիոս Արեոպագացի – Գրիգոր

3 Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ժ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 288-291 (այսուհետ՝ «Մատենագիրք Հայոց»):

4 Այս մասին տե՛ս Հ.Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացի. կեանքն ու մատենագրութիւնը, Եր., ԳԱ հրատ., 1986, էջ 293-295, «Գրիգոր Նարեկացին եւ նորպլատոնականութիւնը», էջ 12, 19, 21-30, 31-34 եւ այլն:

5 «Մատենագիրք Հայոց», Ժ, էջ 571:

Նարեկացի առնչությունների փիրույթում մենք կանգ կառնենք հիմնականում աղոթքի տեսության վրա:

Ա. Աղոթքի եւ օրհնաբանության տեսությունը Դիոնիսիոս Արեոպագացու ապրվածաբանական համակարգում.- Դիոնիսիոս Արեոպագացու տեսական համակարգում հատուկ տեղ է գրավում աղոթքի տեսությունը, որ նա համարում է անմիջնորդ, անմիջական ապրվածահայեցողություն:

Աղոթքի տեսությունն իր հիմքում ունի Երկնային եւ Երկրային քահանայապետությունների, իմանալի եւ զգալի աշխարհների գոյաբանական կապի գաղափարը, ըստ որի այդ երկու աշխարհները գոյացել եւ գոյում են Աստծո նախախնամությամբ եւ գոյակցված, էակցված են իրար: Զգալի, զգայական, երեւելի աշխարհների միջոցով,՝ նրա նշաններով մենք կարող ենք դատել իմանալի, բանական, աներեւույթ աշխարհների մասին:

Դիոնիսիոս Արեոպագացու «Յաղագս ապրուածայնոցն անուանց»[6] երկի III գլուխը նվիրված է աղոթքի՝ իբրեւ ապրվածաբանության անհրաժեշտ, կարեւորագույն մասի քննությանը եւ միստիկ կենցաղավարության մեջ նրա դերի լուսաբանմանը: Այն խորագրված է՝ «Զի՞նչ է աղաթից զաւրութիւն, եւ յաղագս երանելւոյն Յեռոթէոսի, եւ յաղագս երկիւղածութեան եւ շարագրութեան ապրուածաբանականի»[7]:

Այս գործն աղոթքի տեսություն է, որ կապվում է ավելի հոգեզգայական էքստազի, քան բանական հայեցողության հետ: Դա են վկայում հոգեւոր էքստազի մասին հեղինակի նշված աշխատության նաեւ այլ գլուխները, որոնց կանդրադառնանք:

Զգայական աշխարհից վերառաքումը զուգորդվում է առաջին հերթին «սրբազան տռփման» (էքստազի), «ապրվածային սիրո» զգացմունքի, հուզազեղման հետ, որ գերագույն նպատակ է «խորհրդազգած» անձի, միստիկի համար (Դիոնիսիոսն այն անվանում է «տռփական» (սիրային) ապրվածաբանություն»):

Անպղտոր, մաքուր մտքով կատարվող «ամենասուրբ» աղոթքի միջոցով միայն կարող է ներանձնացյալը, հայեցողն առավել մերձենալ գերագույն բարուն՝ Աստծուն եւ նրա «բարեպետությանը», թափանցել բանական աշխարհը, որին այնուհետ միայն հաջորդում է առավել խաղաղ՝ բանական հայեցողությունը, երբ հայեցողը «ուսանում է, սերտում է» ապրվածային պատգամները՝ նրա շուրջը տարածվող էությունների աշխարհը:

Ըստ Դիոնիսիոսի՝ «առաջին հերթին եւ միշտ» ապրվածաբանությունը աղոթքից է պետք սկսել: Նա աղոթքը համարում է անմիջնորդ ապրվածաբանություն, որի միջոցով ձգտելով Աստուծուն, մերձենում եւ միանում ենք նրան՝ ոչ թե նրան ձգելով դեպի մեզ, այլ բարձրանալով առ նա:

Այդ պատճառով բուն ապրվածաբանության սկզբունքները շարադրելուց առաջ նա անդրադառնում է աղոթքին, որի միջոցով, ասես լարի նման երկնային ճառագայթից քաշելով՝ բարձրանում ենք մինչեւ «բարձրագույն, բազմաճաճանչ ճառագայթների պայծառությունը», ապրվածային լուսեղեն բիւմների աշխարհը:

«Եւ որպէս... բազմալոյս ինչ լար ի յերկնից ծայրութենէն կախեալ ի վերուստ մինչ ի վայր, եւ բուռն հարեալ զնմանէ ձեռն ձեռամբ փոփոխելով քարշել թուելով զնա, ոչ զնա ի

6 Տե՛ս "The Armenian version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by R. W. Thomson, Lovanii, in Aedibus E. Peeters, 1987 (այսուհետ՝ **Դիոնիսիոս**), էջ 128-224:

7 Անդ, էջ 149-150:

մեզ քարշեաք, զի վերուստ կապեալն, այլ մեք ելանեաք առ բարձրագոյնսն բազմաճաճանչ ճառագայթիցն պայծառութիւն:

... Վասն որոյ եւ նախ քան զամենայն եւ յաւէտ քան զաստուածաբանութեանն աղաւթից սկսանել պարտ է...»[8]:

Ըստ Դիոնիսիոսի, աստվածային Հոգու այդ ներթափանցումների՝ «հայրաշարժ լուսերեւության» շնորհիվ մարդկային հոգիները միավորվում եւ ձգտում են «աստվածարար պարզության»:

Այս ավանդույթի նորովի արտահայտություններն են Գրիգոր Նարեկացու «լուսազեղուն» տաղերի մի շարք հատվածներ: Հիշենք դրանցից մեկը.

Գունդ տրամք երամից կայք յանուրեք վայր,
Վայր համբից բիւրից աւր սահմանեալ գետ.
Գետ քառանիւթեայք պաղպաջ երկնի փայլ,
Փայլք փաղփինատար անծայրենի լոյս,
Լոյս գերազանցիկ երկնաշաւիղ ռահ...(«Տաղ Յարութեան»)

Երկնից կախված «բազմալոյս» այդ լարի պատկերն օգտագործված է Գրիգոր Նարեկացու՝ Հոբի գրքի մի հատվածի (,Ո՞վ է դան) մեկնության մեջ. «Իբրեւ հրեղեն լարս՝ զսուրբ զաղաւթս յերկինս առաքեսցուք...»[9]:

***

«Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի III գլխի շարունակության մեջ Դիոնիսիոսը բացում է իր միստիկ աստվածաբանության սրբազան գաղտնիքներից մեկը:

Խոսելով իր ուսուցիչ Հեռոթեոսի (նույնն է՝ Ռեթեոս) «Զաստուածաբանականսն տարբութիւնս» (,Աստվածաբանության սկզբունքներն) երկի մասին եւ մեծարելով նրան, Դիոնիսիոսը, դիմելով Տիմոթեոսին, հիշատակում է մի սրբազան պատմություն՝ կապված Հակոբոս Տյառնեղբոր եւ Պետրոս առաքյալի հետ, որի մասնակիցն են եղել նաեւ իրենք՝ Հեռոթեոսի հետ: Բոլոր այս սրբազան այրերը Սուրբ Աստվածածնի ննջման ժամանակ հավաքվում են «աստվածընկալ մարմնի» (ըստ Մաքսիմոս Խոստովանողի մեկնության՝ Սուրբ Աստվածածնի մարմնի) հայեցողության համար: Եւ ահա, գալիս է օրհնաբանության պահը՝ քահանայապետները սկսում են օրհնաբանել Քրիստոսի մարդեղության խորհուրդը, եւ բոլոր այդ սրբազան գաղտնատեսների մեջ հզորագույն է ճանաչվում, հաղթում է Հեռոթեոսը՝ Դիոնիսիոսի ուսուցիչը՝ զարմանքի, սքանչացման մեջ հաղորդակցվելով, «կցորդվելով օրհնաբանվողին»: Դիոնիսիոսը նկարագրում է իր ուսուցչին գերագույն ներշնչանքի պահին, որի շնորհիվ նա կոչվում է «աստվածընկալ եւ աստվածային օրհնաբանող»: Այնուհետեւ նա շեշտում է, որ այդ խորհրդավոր աստվածաբանություններից (նույնն է՝ օրհնաբանություններից) հետո բազմիցս ծանոթացել է նրա «տեսողական» (հավանաբար՝ տեսիլային, ներշնչված, հափշտակված) օրհներգություններին:

«Վասն զի եւ ինքն հանդերձ աստուածընկալ քահանայապետիքն մերովք, յորժամ մեք եւ նա, զոր գիտես իսկ, եւ բազումք ի սրբազանիցն մերոց եղբարց ի տեսութիւն կենդանապե-

8 Անդ, էջ 149-150:
9 «Մատենագիրք Հայոց», ԺԲ, էջ 508-509:

տականի եւ աստուածընկալ մարմնոյն եկաք միահամուռ, անդ էր եւ աստուածեղբայրն Յակոբոս եւ Պետրոս՝ գլխաւորն եւ երիցագոյն աստուածաբանիցն ծայրութիւն. եւ ապա թուեցաւ յեւ տեսութեան աւրհնաբանել քահանայապետիցն ամենեցունց՝ որպէս իւրաքանչիւր ոք էր բաւական՝ զանբաւազաւր բարերարութիւնն աստուածպետականին կարութեան. եւ քան զամենայն սրբազանսն խորհրդազգածս հզաւրագոյն էր յեւ աստուածաբանիցն, բոլորովիմբ սարսելով բոլորովիմբ զարմացմամբ յինքնեան, եւ առ աւրհնաբանութիւնսն կցորդութիւնն կրելով: Եւ առ ի յամենեցունց՝ որք լսէինն եւ տեսանէին եւ որք գիտէինն, եւ որք ոչն գիտին՝ աստուածընկալ եւ աստուածային արհնաբանող կոչիւր»... Քանզի թէ եւ ոչ անձին իմոյ ի մոռացման եղէ, յոլովակի գիտեմ առ ի քէն եւ մասունս ինչ տեսողականացն նոցա աւրհնաբանութեանց...»[10]:

Այսպիսով, ըստ Դիոնիսիոսի, գերագույն ներշնչանքի պահին օրհնաբանությունն ու աստվածաբանությունը ներհյուսվում են, դառնում են միեղեն աստվածահայեցողություն եւ հասցնում Աստծո հետ հաղորդության, կցորդության:

Սա Դիոնիսիոսի աղոթքի տեսության գերագույն աստիճանն է, նրա միստիկ աստվածաբանության կիզակետը:

***

Դիոնիսիոսն իր այս երկի օրհնաբանական բնույթի մասին է խոսում առաջին իսկ գլխում, որ թուղթ է՝ ուղղված Տիմոթէոս քահանային («Քահանայակցի Տիմոթեայ ի Դիոնիսէ քահանայէ»)[11]:

«Այսոցիկ աստուածատեսակքն իմացութիւնք հրեշտականմանապէս, որպէս հասանելի է, միաւորեալք, վասն զի ըստ ամենայն իմանալոյ ներգործութեան դադարման այսպիսի ինչ լինի աստուածացելոցն իմացութեանց առ ի վերուստն լոյս միութիւն, աւրհնեն զնա տիրագոյնս ի ձեռն ի բաց որոշմանն յամենայն էիցս, զայս ճշմարտաբար եւ գերաբնապէս լուսափայլեցեալք առ ի յերանականէն միաւորութենէ, զի ամենայն էիցս է պատճառ, իսկ Նա ոչ ինչ որպէս քան զամենայն գերագոյապէս արտաքս որոշեալ:

Իսկ զգերագոյութիւնն զաստուածպետական եթէ զինչ երբէք իցէ, եւ կամ զգերագոյ բարերարութեանն էութիւն՝ ոչ որպէս զբան կամ զաւրութիւն, եւ ոչ որպէս զմիտս կամ զկեանս, կամ զէութիւնս է պարտ աւրհնաբանել, ոչ ումեք, որք գերագոյն քան զամենայն ճշմարտութիւն ճշմարտութեանն տոմարք, այլ որպէս յամենայն ունակութենէ եւ շարժութենէ, կենաց, երեւմանէ մտաց, կարծեաց, անուանէ, բանէ, մտածութեանց, իմացուածոյ, էութենէ, կայից, սերտութենէ, միութենէ, բովանդակութենէ, անբաւութենէ, յամենայնէ որքան ինչ էքս են՝ գերունակապէս ի բաց որոշեալ:

Բայց վասն զի որպէս բարերարութեան գոյութիւն նորին գոլոյն ամենայնի է պատճառ՝ զբարեսկզբնականն նախախնամութիւն աստուածպետութեանն յամենայն պատճառաւորացս է աւրհնաբանելի:

Վասն զի Նովաւ են ամենայնքս եւ Նորա աղագաւ, եւ Նա է նախ քան զամենայն, եւ ամենայն ինչ ի նա հաստատեցաւ, եւ գոլս այս բոլորիցս յառաջածութիւն եւ գոյացութիւն, եւ նմա փափաքէ ամենայն իմանալիքն եւ բանաւորք դիտողապէս, իսկ նուաստագոյնքն քան

10 Անդ, էջ 151-152:
11 Անդ, էջ 128-137:

զնոսա ըստ զգալեաց, եւ այլքն ըստ կենդանական շարժութեան եւ կամ գոյեղինիւ եւ բնաւորական պատեհութեամբ»[12]:

Հեղինակը պարզաբանում է իր հասպատող եւ ժիտող աստվածաբանության սկզբունքները, իբրեւ օրհնաբանության եղանակներ, որոնք հետագայում, առավել խորացված ներկայացվում են «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկում:

«Արդ՝ զայս տեսեալ աստուածաբանիցն, եւ որպէս անանուն աւրհնաբանեն զնա, եւ յամենայն անուանէ: Անանուն՝ որպէս յորժամ ասեն զնոյն աստուածպետութիւնն միով ի խորհրդականացն նշանականին աստուածերեւութեանն սասպել հարցողին, եթէ զի՞նչ անուն է քո, եւ որպէս յամենայն աստուածանունականէ գիտութենէ ի բաց տանելով զասելն, եթէ եւ ընդէ՞ր հարցանես զանուն իմ, եւ այս է սքանչելի: Ո՞չ ապաքեն արդարեւ Էին է սքանչելի անուն, որ գերագոյն քան զամենայն անուն, Էն՝ անանուն, որ քան զամենայն անուն անուանեալ գերագոյն է սերտեալ՝ թէպէտ յաշխարհիս յայսմիկ եւ թէպէտ ի հանդերձելումն»[13]:

***

Իր ուսուցչի՝ Հեռոթէոսի հետ կապված սրբազան այս պատմության հիշատակումից հետո, որ պարզում է նրա աստվածաբանության բուն էությունը, Դիոնիսիոսը զարգացնում է իր փիլիսոփայական համակարգը, որն իր հիմնական մասերով դարձյալ ներառվում է աղոթքի տեսության, օրհնաբանության եւ փառաբրության ձեւերի ու եղանակների օրինաչափությունների, «սրբազնագոյն, խորհրդազգած» (միստիկ) իմաստի ու նշանակության մեկնաբանության մեջ, դրանք դիտելով իբրեւ հոգեւոր վերառաքման եւ աստվածաճանաչողության ճանապարհ:

Եւ իրոք, հետագա շարադրանքում պարզվում է, որ Հեռոթեոսի՝ այդ աստվածային օրհներգուի «Աստվածաբանության սկզբունքների» հիմնական շերտերից է աղոթքի տեսությունը, որը հանդես է գալիս իբրեւ օրհնաբանություն կամ օրհնաբանության տեսություն: Դիոնիսիոսն այն ներկայացնում է «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի IV գլխի 3 ենթագլուխներում (15-17)[14]: Տոփական (սիրային) օրհնաբանության մասին է նաեւ IV գլխի 13-րդ ենթագլուխը (,Յաղագս զարմացման)[15], ուր այն ներկայանում է իբրեւ աստվածային սեր եւ տարփանք՝ կապվելով մշտնջենավոր, մշահոլով Բարու՝ իբրեւ աստվածային էության գաղափարի հետ:

Այժմ մեջ բերենք նմուշներ այդ օրհնաբանություններից:

«Սրբոյն Յեռոթէոսի ի տոփականացն աւրհանաբանութեանց:

Զտոփումն թէպէտ աստուածային, եւ թէպէտ հրեշտակական, թէպէտ իմանալի եւ թէպէտ անձնական, եւ թէպէտ բնական ասասցուք... զգերագանցագոյնսն շարժելով ի նախախնամութիւնս խոնարհագունիցն, իսկ համատարերսն դարձեալ ի կցորդականն զմիմեանս ունակութիւնս, եւ յեղոյ զնուաստն առ ի վեհագունից եւ գերակայիցն դարձումն»[16]:

«Յաղագս զարմացման

Եւ բոլորովիմբ ազնուի եւ բարոյ է տոփողութիւնն, եւ տոփումն, եւ ի յազնուին եւ բարոջն նախատեսակի, եւ վասն ազնուի եւ բարոյ է եւ լինի:

12 Անդ, էջ 134:
13 Անդ, էջ 134-135:
14 Տե՛ս անդ, էջ 167-183:
15 Տե՛ս անդ, էջ 166-167:
16 Անդ, էջ 167-168:

... Եւ որպէս երեւեցուցիչ գոլով ինքեան ինքեամբ, եւ արտաքս որոշեցելոյն միութեան բարի յառաջ ճանապարհ եւ միաւորական շարժումն, պարզ, ինքնաշարժ, ինքնաներգործ, յառաջագոյն գոլով ի բարւոջն, եւ ի բարւոյն էիցս բղխելով, եւ անդրէն ի բարին դառնալով: Որով եւ զանվախճանութիւն իւր եւ զանսկզբնութիւն ցուցանէ առաւելապէս աստուածային տոչմումն, որպէս զշրջագայ ինչ մշտնջենաւոր, վասն բարւոյ, եւ ի բարւոյ, եւ ի բարւոջ, եւ ի բարի անմոլար հոլովիւք շուրջ ընթացեալ եւ ի նորին, եւ ըստ նորին, եւ յառաջ գոլով միշտ, եւ մնալով, եւ հասանելով: Զայս եւ բարեփառ նորակատարն մեր աստուածայնաբար պատմեաց ի տոչականսն աւրինաբանութիւնսն, զոր ոչ է անտեղի յիշել եւ որպէս սրբազան ինչ գլուխ ի վերայ դնել յաղագս տոչման մերոյս բանի»[17]:

Ասենք, որ այս ենթագլուխներում առավել ընդգծված է զգացմունքային-հուզական շերտը, քանի որ դրանք շոշափում են աստվածային սիրո եւ զարմանքի, հիացման, սքանչացման զգաւփարները, որոնց շնորհիվ խորհրդազգած (միստիկ) անհատը կարող է հաղորդվել աստվածայինի հետ:

Ըստ Էության, հուզական-գեղագիտական այդ շերտը հատուկ է ողջ ստեղծագործությանը:

Օրհնաբանական բնույթ ունի «Յաղագս աստուածայնոցն անուանց» երկի գլուխների մեծ մասը: Այսպես, «Յաղագս Բարւոյ, Լուսոյ, Ազնուի, Տոչման, Զարմացման...» ենթագլխում, որի խորագիրն իսկ վկայում է նրա բնույթը, կարդում ենք. «Այլ զայսոսիկ է ի նշանականին աստուածաբանութեան: Իսկ այժմ զիմացականն բարիանունութիւն է աւրինաբանելի եւ ասելի...»[18]:

Այս երկի գլուխները հորինված են իբրեւ աստվածաբանական հիմներ, որոնք միախառնված են փիլիսոփայական-գեղագիտական դրամախոսության հետ: Այդ է հուշում նաեւ այս խորհրդավոր երկի բանաստեղծական բնաբանը, որ բացակայում է հայերեն թարգմանության մեջ.

Աստվածախոս շուրթերդ լուսեղեն մտքի ծիրն ընկղմած
Դու վերառաքում ես սրբազան անունների գեղեցկությունը...
Արարելով աստվածաձայն օրհներգություններ[19]...

***

«Յաղագս աստուծայնոցն անուանց» երկի օրհնաբանական բնույթը բազմիցս շեշտադրվում է տարբեր գլուխներում:

Սիրո, գեղեցկության տարփողում է «Յաղագս Ազնուի» գլուխը.

«Այս բարիս աւրինաբանի առ ի սրբազանիցն աստուածաբանիցն եւ որպէս ազնիւ, եւ որպէս գեղեցիկ, եւ որպէս սէր. եւ որպէս սիրելի, եւ որքան այլ ինչ են վայելուչք ազնուաբարի եւ բերկրեցելոյ գեղեցկութեանն աստուածանունութիւնք: Իսկ զազնիւն եւ զգեղեցիկն ոչ է անջատելի... քանզի այսոքիկ ի վերայ էիցս ամենայնի ի հաղորդութիւնս եւ ի հաղորդելն որոշին: Եւ ազնիւ գոլ ասեմք զգեղեցկութեանն հաղորդն, իսկ գեղեցիկ զհաղորդութիւնն՝ գեղեցկաբար պատճառին ամենայն գեղեցկութեան: Իսկ գերագոյ ազնիւն գեղեցիկ ասի վասն ի

17 Անդ, էջ 167:
18 Անդ, էջ 158:
19 Տե՛ս Дионисий Ареопагит, Сочинения, էջ 207:

յինքենէ զամենայն էսս հաղորդեցուցանելոյն իւրաքանչիւր ունելք ընդանեբար զգլուռութիւնն, եւ որպէս ամենայն գեղեցկայաւդութեան եւ պայծառութեան պատճառ՝ զաւրէն լուսոյ փայլատակեալ յամենեսին զգլուռագործն հաղորդութիւնս աղբիւրեղէն ճառագայթին իւրոյ...»[20]:

Հեղինակն ամենուրեք օգտագործում է օրհներգության, օրհնաբանության ժանրին հատուկ բառապաշար եւ ճարտասանական բարձրարվեստ ոճ, որը հատուկ շեշտում է Անանիա Նարեկացին. «Դիոնիսիոս Արիսպագացի՝ աթէնական փիլիսոփայ եւ գերակատար ճարտասան»: Դիոնիսիոսի երկերի այս յուրահատուկ բառապաշարը մեծապես ազդել է եւ՝ Անանիա Նարեկացու, եւ՝ Գրիգոր Նարեկացու վրա: Այդ ազդեցություններն ի հայտ են գալիս հատկապես նրանց ներբողներում:

Սրբազան այդ օրհնաբանություններն է հեղինակը հնչեցնում նաեւ այլ գլուխներում: Օրինակ, «Յաղագս Էի յորում եւ յաղագս յարացուցից» գլխում կարդում ենք. «Արդ զայսոսիկ փափագէ բանս աւրհնաբանել զնախախնամութեանն յայտնաբանականսն ասդուածանուանութիւնս:

Քանզի ոչ արտաքս պատմել խոստանայ զնորա գերագոյ բարերարութիւնն եւ ասդուածութիւն, եւ կեանս, եւ իմաստութիւն զիւրոյ գերագոյի ասդուածութեանն, որ գերագոյն քան զամենայն բարերարութիւն եւ ասդուածութիւն, եւ էութիւն, եւ իմաստութիւն, եւ կեանս ի ծածկոյթ՝ որպէս ասացեալքն ասեն՝ է գերասերտեալ: Այլ զասացեալսն բարերարական նախախնամութիւն գերունակապէս բարերարութիւն, եւ զամենայն բարերարութեան պատճառն է աւրհնաբանելի՝ եւ Ասդուած, եւ կեանս, եւ իմաստութիւն, [եւ] էացուցիչ, եւ կենդանարար, եւ իմաստատուր պատճառ էութեան, եւ կենաց, եւ մտաց, եւ բանի, եւ զգայութեան հաղորդեցելոցն»[21]:

Այս դրվագում հեղինակը փափագում է «խոսքով օրհնաբանել ասդվածային նախախնամության հայտնաբանական ասդվածաբանությունը»:

Ինչպես տեսնում ենք, սա հեղինակային վկայություն է օրհնաբանական խոսքի եւ հայտնաբանական ասդվածաբանության ներմիության մասին: Բնագրի այս խորքային շերտերից եւ միահյուսումից է գոյավորվում հեղինակի զարմանալի ոճը: Օրհնաբանության միջոցով հեղինակը նաեւ հայտնաբանում է՝ հասնելով փիլիսոփայական խոր ընդհանրացումների:

Իբրեւ հավիտենական կենաց ճշմարտություններ՝ Դիոնիսիոսն օրհնաբանում է մարդկային խոսքը, միտքը, իմաստությունն ու հանճարը՝ իբրեւ մտավոր շարժում, իբրեւ «ինքնիմաստություն»:

«Յաղագս իմաստութեան, մտաց, բանի, ճշմարտութեան, հաւատոյ:

Արդ բեր, եթէ թուեսցի, զբարի եւ զյաւիտենական կեանսն որպէս զիմաստուն, որպէս զինքնիմաստութիւն աւրհնաբանեսցուք, յաւէտ զի ամենայն իմաստութեան գոյացուցիչ եւ գերագոյն, քան զամենայն իմաստութիւն եւ ոհանճար գոլով...

Եւ բան աւրհնաբանի Ասդուած առ ի սրբազանիցն ասացելոց, ոչ միայն զի եւ բանի, եւ մտաց, եւ իմաստութեան է բաշխող, այլ զի եւ զամենայնի պատճառս ի յինքեան միատեսակապէս է առեալ...»[22]:

---

20 **Դիոնիսիոս**, էջ 159

21 Անդ, էջ 184:

22 Անդ, էջ 192, 197:

Իբրեւ «գերիմաստ իմաստասիրութիւնն՝ Դիոնիսիոսն օրհնաբանում է աստվածային արդարութիւնը. այն նորպլատոնական փիլիսոփայության բարձրագույն բարոյագիտական աստիճանն էր համարվում, որով իմաստասերը ձգտում էր աստվածանմանության:

«Յաղագս զարութեան, արդարութեան, փրկութեան...

Այլ վասն զի աստուածայինն ճշմարտութիւն եւ գերիմաստ իմաստութիւն, եւ որպէս զարութիւն արհնաբանէն, եւ որպէս զարդարութիւն աստուածաբանքն, եւ որպէս զփրկութիւն զնա կոչեն, եւ փրկանս, բեր եւ զայսոսիկ՝ որպէս հասանելի է մեզ՝ զաստուածանմանութիւնս բացցուք...

Արդարութիւն դարձեալ արհաբանի Աստուած, որպէս ամենեցունց ըստ արժանաւորութեան բաշխելով զբարեւչափութիւն եւ զգեղեցկութիւն, եւ բարեկարգութիւն, եւ զարդ...

Արդ այս աստուածային արդարութիւնս եւ փրկութիւն բոլորիցս արհնաբանի « զառանձին իւրաքանչիւր ուրուք էութիւն եւ կարգ ապրեցուցանելով եւ պահելով... Իսկ եթէ ոք արհնաբանեսցէ զփրկութիւնն... ամենայն իրաւք ուրեք եւ մեք ընկալցուք զայս արհնաբանող ամենայնի փրկութեան, եւ զնոյն զառաջինն փրկութիւն բոլորիցս աղաչեսցուք նմա սահմանել...»[23]:

Օրհնաբանության այդ ոգին պահպանվում է անգամ փիլիսոփայական ամենաբարդ խնդիրներն ու հասկացությունները քննելիս, ինչպես «Յաղագս մեծի, փոքու, նորին, այլոյ, նմանոյ, անմանոյ, կայից եւ շարժութեան, հաւասարութեան» գլխում: «Այդ մեծ արհնաբանի Աստուած յասացեալսն եւ ի մեծութիւն, եւ ի սիք նուրբ զաստուածայինն նուազութիւն ցուցանելով... որպէս նմանից եւ նմանութեանց զոյացուցիչ, եւ անման ամենեցունց... եւ կայուն, եւ անշարժ, եւ նստեալ յաւիտենական, եւ շարժեալ... եւ որքան այլ ինչ համազարք՝ այսոցիկ աստուածանմանութիւնք յասացելոց արհնաբանին»[24]:

Նույն պատկերն է «Յաղագս Ամենակալին, հնոյն աւուրց, յորում եւ յաղագս յաւիտենի եւ ժամանակի» գլխում, ուր Աստված օրհնաբանվում է իբրեւ ժամանակի եւ հավիտենության սկզբնապատճառ.

«Ժամ է այժմ բանիս զբազմանունն Աստուած որպէս զամենակալ եւ որպէս զհին աւուրց արհնաբանել...

Իսկ Աստուած որպէս զյաւիտեան եւ որպէս զժամանակ արհնաբանելն, որպէս ամենայն յաւիտենի եւ ժամանակի պատճառ, եւ հին աւուրց որպէս նախ քան զժամանակ եւ վերագոյն քան զժամանակ, եւ փոփոխող ժամուց եւ ժամանակաց, եւ դարձեալ նախ քան զյաւիտեանս զոլով, ըստ որում եւ նախ քան զյաւիտեանս է եւ գերագոյն քան զյաւիտեանս, եւ արքայութիւն նորա արքայութիւն ամենայն յաւիտենից»[25]:

Բերենք եւս մի քանի բնորոշ օրինակ.

«Յաղագս խաղաղութեան...

Արդ բեր զաստուածայինն եւ ժողովապետն խաղաղութիւն արհնութեամբք խաղաղականաւք վերահոչակեսցուք»[26]:

«Յաղագս Սրբոյն Սրբոց, Թագաւորին թագաւորաց, Տեառն տերանց, Աստուծոյ աստուածոց:

Այլ վասն զի եւ յաղագս այսոցիկ որքան ինչ ասել պարտ էր՝ զարժանն առաք վախճան,

23 Անդ, էջ 198, 201, 203:
24 Անդ, էջ 204:
25 Անդ, էջ 209,211:
26 Անդ, էջ 212:

աւրհնաբանելի է մեզ զանբաւ անունն եւ որպէս զՍուրբ Սրբոց, եւ որպէս զԹ-ագաւոր թագաւորաց թագաւորելով յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից եւ եւս՝ եւ որպէս Տէր տէրանց եւ Աստուած աստուածոց»[27]:

Բնականաբար, փառաբանությունն ու սրբասացությունը կենտրոնանում է Սուրբ Երրորդության վրա, այն փարփռվում է իբրեւ Առաջնամիակ, Սկզբնապատճառ եւ Աստուածապետություն:

«Յաղագս Կապարելոյն եւ Միոյ

Արդ ի վերայ նորին բանին եթէ թուեսցի՝ առաւելագոյն դեգերեսցուք, քանզի աստուածաբանութիւնն ըստ ամենայնի պատճառին եւ զամենայն, եւ համանգամայն զամենայն ստորոգէ, եւ որպէս Կապարեալ, եւ որպէս զՄի աւրհնաբանէ...

Արդ այսու աստուածաբանութիւնն զբոլորն աստուածապետութիւն որպէս զամենեցունց պատճառ աւրհնաբանէ միոյ մականունութեամբ, եւ մի Աստուած Հայր եւ մի Տէր Հիսուս Քրիստոս, եւ մի նոյն Հոգին Սուրբ՝ վասն գերազանցեալ անբաժանութեանն բոլոր աստուածականին միութեան...

Եւ պիտոյ է եւ մեզ ի բազմացն ի Մին դառնալ զաւրութեամբ աստուծականին միութեան եւ միեղինաբար աւրհնաբանել...»[28]:

Աստվածաբանական հայտնությունների, օրհնաբանությունների այս շարքը կարելի է երկար շարունակել:

«Յաղագս տռփման» ենթագլխում հեղինակը խոսում է սիրո գիտության, սիրո աստվածաբանության մասին եւ փարփռվում, օրհներգում է այն.

«Արդ ամենեցունց է ազնիւն եւ բարի փափաքելի եւ տռփելի, եւ սիրելի...

Տռփեա՛ ի նա, ասէ, եւ սիրեսցէ զքեզ. շուրջ, պատեա՛ զնովաւ եւ բարձրացուսցէ զքեզ. պատուեա՛ զնա եւ գիրկս արկցէ զքեւ, եւ որքան այլ ինչ ըստ տռփողականաց աստուածաբանութեանց աւրհնի:

Զի թուեցաւ եւ ոմանց առ ի մէնջ սրբազնաբանողաց աստուածայնագոյն լինել տռփմանն անուն սիրոյն... Եւ ի նախաներածութիւնս ասացելոցն գտցես զոմն, զի ասէ յաղագս աստուածայնոյն իմաստութեան, եթէ տռփեալ եղէ ի գեղեցկութեան նորա... Քանզի աստուածավայելչապէս արդարեւ տռփմանն ոչ միայն առ ի մէնջ, այլ եւ ի նոցունց ասացելոցն աւրհնեցելոյ, բազմութիւնն ոչ զատեալ ի միատեսակութենէ տռփականին աստուածանուանութեան... Վասն որոյ եւ որպէս դժուարագոյն անուն թուեցելոյ բազմաց ի վերայ աստուածայնոյն իմաստութեանն դասի, եւ առ ի վերածութիւն նոցա, եւ յարութիւն, եւ յարդարեւ **տռփմանն գիտութիւն**...

Արդ որք ուղղակի լսեն զաստուածայինսն, ի վերայ նորին զաւրութեան դնի առ ի սրբազանիցն աստուածաբանից սիրոյ եւ տռփման անուն ըստ աստուածայնոցն յայտնաբանութեանց: Եւ է այս միացուցչի զաւրութեան եւ շաղկապականի, եւ առաւելապէս շարունականի ի յազնուին եւ ի բարւոջ, վասն ազնուի եւ բարւոյ նախագոյացելոյ, եւ յազնուէ եւ ի բարւոյ վասն ազնուի եւ բարւոյ տուեցելոյ, եւ միահամուռ ունելով զհամակարգս ըստ հասարակորդականին զմիմեանս ունակութեան, շարժելով զառաջինսն առ ի նուաստագունիցն նախախնամութիւն եւ սերտելով զխոնարհագոյնս դարձիւ առաւելագունիցն»[29]:

27 Անդ, էջ 217:
28 Անդ, էջ 219-220:
29 Անդ, էջ 163-166:

Աստվածային սերը աստվածային միավորող եւ շաղկապող զորություն է, որ իրար է կապում երկնային եւ երկրային քահանայապետությունները, «համակարգերը՝ վերին զորություններից մինչեւ նվաստագոյն արարածները: Այս գաղափարն, ինչպես կտեսնենք, ուրույն արտահայտություն է գտել Գրիգոր Նարեկացու երկերում:

***

Մի շարք դեպքերում տեսական դատողություններն աստվածաբանության օրհնաբանական բնույթի մասին ձեռք են բերում առավել գեղարվեստական ինքնաբուխ հնչերանգներ ու երանգավորումներ՝ շեշտելով երկերի ճարտասանական-գեղարվեստական առանձնահատկությունները: Այդպիսին է «Յաղագս կենաց» ենթագլուխը, որ մի կատարեալ ներբող, օրհներգություն է կյանքին եւ բնությանը.

«Իսկ այժմ աւրհնաբանելի է մեզ զկեանսն յաւիտենից, յորմէ ինքնակեանք եւ ամենայն կեանք...

Եւ ամենայն կեանք եւ կենդանական շարժութիւն ի կենացն, որ գերագոյն է քան զամենայն կեանս եւ զամենայն սկիզբն ամենայն կենաց: Ի նմանէ եւ անձինք զանապականութիւնն ունին, եւ կենդանիք ամենայն, եւ տունկք ըստ յերին հնչման նմանութեան կենաց ունելով զկեանսն...

Քանզի եւ ոչ նորա գոլն է յայլմէ պատճառէ, այլ ի նմանէ եւ զկեալն, եւ զգոլն, եւ զյարակայութիւնն ունի: Պարգեւեալ եւ արանց որպէս շարահառնիւք զհնարաւորեալն հրեշտակատեսակ կենդանութիւն, եւ գերաբուղխ մարդասիրութեամբ զհեռացեալսս զմեզ ի յինքն դարձուցեալ եւ վերակոչեալ: Այլ եւ որ աստուածայնագոյնն եւս է, զի եւ զբոլորսս զմեզ զանձինսս եւ զլծակից մարմինս ասեմ առ ամենակատար կեանս եւ անմահութիւն խոստացեալ փոխել՝ իր հնութեամբ թերեւս արտաքոյ բնութեան թուեցեալ, բայց ինձ եւ քեզ, եւ ճշմարտութեանն, եւ աստուածային, եւ ի վեր քան զբնութիւն:

Իսկ վերագոյն քան զբնութիւն ասեմ, զոր ի մեզս է երեւեալ, ոչ ամենազաւրութիւն աստուածայնոյն կենդանութեան, քանզի նմա որպէս ամենայն կենդանեաց զոլով բնութիւն եւ մանաւանդ աստուածայնագունիցն, եւ ոչ մի կեանք են արտաքոյ բնութեան կամ ի վեր քան զբնութիւն...

Ի նմանէ կենդանանայ եւ ջեռնու կենդանիք ամենայն եւ տունկք: Եւ թէպէտ իմանալի ասացից, թէպէտ բանական, թէպէտ զգայական, թէպէտ սնդական եւ աճողական, թէպէտ զինչ եւ իցէ կեանս, կամ կենաց սկիզբն, կամ կենաց էութիւն՝ ի նմանէ կեայ եւ կենդանանայ ի գերագոյն քան զամենայն կենացն, եւ ի նմանէ ըստ պատճառոյ միապետակապէս նախագոյացաւ: Զի եթէ գերագոյն կեանք եւ կենդանապետական կեանք է, եւ ամենայն կենաց է պատճառ, եւ կենդանածին, եւ լցողական, եւ անջատողական կենաց: Եւ յամենայն կենաց է աւրհնաբանելի ըստ բազմաձեւութեանն ամենայն կենաց, որպէս ամենեւիմբ եւ ամենայն կենաւք տեսեալ եւ աւրհնաբանեալ, եւ որպէս անկարաւտ, յաւէտ լի եւ գերալիր կենաւք, ինքնակեանք եւ որպէս ի վեր քան զամենայն կեանս կենդանարար, եւ կամ զիարդ եւ իցէ արդեաւք զանբարբառելի կեանսն մարդկաւրէն ոք աւրհնաբանեսցէ»[30]:

Աստծո արարչագործության, բնության փարփողման այս կենարար շունչն իրեն զգացնել է տալիս Գրիգոր Նարեկացու տաղերում եւ ներբողներում:

30 Անդ, էջ 190-192:

Բ. Աղոթքն ու օրհնաբանությունն իբրեւ Դիոնիսիոսի երկերի ներքին կառուցվածքային շերտ ու խորքային հղացք. - Բոլոր այս փաստերը վկայում են, որ Դիոնիսիոսն իր «Յաղագս ապտուածայնոցն անուանց» երկը հղացել է իբրեւ օրհնաբանությունների գիրք՝ ձոնված Արարչին եւ նրա արարչագործությանը, մարդուն ու մարդկային հանճարին, օրհնաբանություններ, որոնք ներհյուսված են ամենաբարդ ու խրթին, հաճախ գաղտնածածուկ ապտվածաբանական տեքստերին: Դրանք ողողված են լույսով, տարփողում են Աստծո արարչագործության հրաշքը, ապտվածայինով ներթափանցված ողջ տիեզերքը, որ զեղուն է սիրով եւ անընդհատ շարժման մեջ է: Անընդհատ շարժման մեջ են նաեւ զարմանալի այս բնագրերը, որոնք ներթափանցել են Գրիգոր Նարեկացու երկերի մեջ, եւ նրանով միջնորդավորված, «շաղկապված եւ էակցված» տիեզերական շրջապտույտը շարունակվում է առ այսօր:

Նման տեսանկյունից դիտարկելով՝ Դիոնիսիոսի երկերում նկատելի է ներքին մի կառույց, որ թույլ է տալիս նրա միստիկ տեսությունը, եթե ոչ ամբողջությամբ, ապա հիմնական մասերով, ընկալել իբրեւ համապարփակ աղոթքի տեսություն, քանի որ աղոթքը, օրհնաբանությունը, ըստ էության, նրա ապտվածաբանական համակարգի, ապտվածաճանաչողության սկիզբն է եւ վերջը, միջոցն ու նպատակը: Եւ աղոթքի ժանրի մեջ են ներառվում աղոթքը, օրհնաբանությունը, փառաբանությունը, խորհրդավոր միստիկ ներսուզումները եւ մտահայեցումները, որոնք արդյունք են աշխարհն իբրեւ ապտվածային անվերջ հղացման, լուսեղեն արարչագործության ծիր, անվերջ բիում եւ շրջապտույտ ընկալելու դիոնիսիոսյան գաղափարի, ըստ որի արարման գերագույն ներշնչանքի պահին մարդն էակցվում, միախառնվում է ապտվածային ոլորտներին, ապտվածանում է՝ ըստ մարդկային կարելիության ու կարողության:

Դիոնիսիոսն աղոթքն ընկալում ու ներկայացնում է իբրեւ անմիջական ապտվածահաղորդության եւ ապտվածահայտնության արվեստ եւ գիտություն, իբրեւ յուրատեսակ առաջին ապտվածաբանություն, որի միջոցով աղոթողը կամ ապտվածաբանողը բարձրանում եւ իջնում է երկնային ապտիճանակարգերով: Նա շեշտում է աղոթքի նշանակությունը, մշակում նրա տեսությունն ու մեթոդաբանությունը: Եւ իր ողջ ապտվածաբանական համակարգը նա ներառում է այս շղթայի մեջ՝ իբրեւ վերառաքման աղոթք, սիրազեղուն, էքստատիկ օրհնաբանություններ եւ հիմներ, եւ, իբրեւ բանական հայեցողության բարձրագույն վիճակներ ու ներսուզումներ՝ կատաֆատիկ (ճառելի, հաստատող) եւ ապոֆատիկ (անճառելի, ժխտող) փառաբանություններ, որոնք, ըստ էության, աղոթքի ձեւանմուշներ ու օրինակներ են:

Ճառելի ապտվածաբանությանն է նվիրված «Յաղագս ապտուածայնոցն անուանց», անճառելի՝ «Յաղագս խորհրդականի ապտուածաբանութեան» երկը:

Այս շղթային է անմիջականորեն ներհյուսվում Դիոնիսիոսի պատկերի տեսությունը՝ «նշանական ապտվածաբանությունը», որի զորեղ ազդեցությունը նույնպես ակնառու է Նարեկյան դպրոցի եւ հատկապես Գրիգոր Նարեկացու ստեղծագործության վրա:

Բոլոր այս օրհնաբանություններն ու փառաբանությունները նախօրինակ են հանդիսացել Գրիգոր Նարեկացու ստեղծագործության համար: «Մատեանի» շատ դրվագներ ապտվածային գերանունության շարքեր են:

Խորհրդական ապտվածաբանությունը. ապոֆատիկ եւ կատաֆատիկ օրհնաբանության սկզբունքները.-Գրիգոր Նարեկացու վրա զորեղ ազդեցություն է թողել նաեւ Դիոնի-

սիոսի «խորհրդական աստվածաբանությունը», որն իր ողջ փիլիսոփայական-խորհրդապաշտական ծավալումներով եւ առեղծվածային խորքերով՝ նույնպես ներկայանում է իբրեւ աղոթքի, օրհնաբանության տեսությունկամ ներածություն:

Այդ մասին են վկայում «Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան» երկի II ենթագլխի խորագիրն ու բովանդակությունը, ինչպես նաեւ մնացած բոլոր գլուխները, որոնք ուսուցանում են, թե ինչպես պետք է կառուցել աղոթքն ու օրհնաբանությունը եւ միաժամանակ տալիս են դրա օրինակները: Նա մշակում է հատուկ եղանակներ եւ սկզբունքներ, որոնք անվանում է ապոֆատիկ եւ կատաֆատիկ (ժխտող եւ հաստատող, դրական եւ բացասական) աստվածաբանություններ:

,Զիա՞ղդ պարտ է միաւորիլ եւ աւրհնութիւնս վերադրել ամենայնի պատճառին եւ գերագունին քան զամենայն:

Ըստ այսորիկ լինել առնեմք աղաւթս մեք զգերալոյսն մէգ եւ ի ձեռն անտեսութեան եւ անգիտութեան տեսանել եւ գիտել զգերագոյն, քան զտեսութիւն եւ գիտութիւն զնոյն զոչ տեսանելն եւ գիտել: Քանզի այս է արդարեւ տեսանելն եւ գիտել, եւ զգերագոյ Էն գերագոյապէս աւրհնաբանել ի բաց բարձմամբ զամենայն էսս, որպէս որք մինչ ինքնաբուն առնիցեն պատկեր եւ ի բաց առնուցուն զամենայն զոր առ ի խափան մաքուր տեսութեան իցէ եղեալ ի վերայ, եւ ինքն ինքեամբ միայն ի բաց բարձմամբն զծածուկ գեղեցկութիւնն երեւեցուցանէ: Արդ պիտոյ է, որպէս վարկանիմ, ի բաց բարձմունսն ներհակապէս դրութեանցն աւրհնաբանել»[31]:

Իր այս խորհրդավոր երկասիրությունը, իր իսկ սկզբունքի համաձայն, նա սկսում է Սուրբ Երրորդությանն ուղղված սրբազան աղոթքով.

Երրորդութիւն գերագոյ, գերագոյնդ Աստուած
Եւ գերագոյնդ բարութիւն,
Քրիստոնէից վերատեսուչ յաստուածայնոյ իմաստութեանն,
Ուղղեա՛ զմեզ ի խորհրդականացն ասացելոց
Գերանծանաւթ եւ գերաճառանչ
Եւ ծայրագոյնն գագաթն,
Ուրանաւր պարզքն եւ արձակք,
Եւ անփոփոխելիք աստուածաբանութեանն
Խորհուրդք ըստ գերալուսութեանն՝
Ծածկեալ թաքնախորհուրդ լռութեան միգով՝
Ի խաւարչտի զգերերեւակութիւնն վերափայլեալ
Եւ ամենաբազում ամենաշաւշափութեամբն,
Եւ աներեւութիւն գերագոյն գեղեցկաւքն պայծառութեամբք
Գերալիր արարեալ զանաչեայսն իմացութիւնս:
Արդ ինձ այսոքիկ ըղձալի լիցին... [32]

Սուրբ Երրորդությունը ներկայանում է որպես սրբազան խավար, որի անմատույց լույ-

31 Անդ, էջ 226-227:
32 Անդ, էջ 224:

սը՝ «գերալուսությունը» պատված է «թաքնախորհուրդ լռության միգով», եւ որին կարելի է հասնել «անաչյա իմացությամբ»:

Աղոթքի ընթացքում ներհյուսվում են էքսպատիկ ապտվածաբանության բոլոր ապրիճանները, եւ էքսպազը կայանում է գերագույն էության անընմբռնելի ընկալմամբ՝ հիացման, զարմանքի, հափշտակության վիճակում. «Անընմբռնեալ եւ արձակ, եւ մաքուր զարմացմամբն առ գերագոյ ճառագայթն ապտուածայնոյն խաւարի համբարձցիս՝ զամենայն թողեալ եւ յամենայնէ ի բաց լուծեալ»[33]:

Ահա աղոթքի նման մի նմուշ.
Եւ դարձեալ ի վեր ելանելով ասասցուք,
թէ ոչ անձն է եւ ոչ միտ,
ոչ երեւոյթ կամ կարծիս,
կամ բան, կամ իմացումն ունի:
Ոչ բան է եւ ոչ իմացումն,
ոչ ասի եւ ոչ իմանի:
Ոչ թիւ է եւ ոչ կարգ,
ոչ մեծութիւն եւ ոչ փոքրութիւն,
ոչ հաւասարութիւն եւ ոչ նմանութիւն կամ անմանութիւն:
Ոչ կայ եւ ոչ շարժի,
ոչ լռութիւն բերէ եւ ոչ ունի զաւրութիւն:
Ոչ զաւրութիւն է եւ ոչ լոյս,
եւ ոչ կեանք է, եւ ոչ էութիւն,
ոչ յաւիտեան եւ ոչ ժամանակ,
ոչ զգայութիւն ...
վասն զի եւ գերագոյն քան զամենայն դրութիւն է
ամենակատար եւ միեղէն պատճառն ամենայնի,
եւ գերագոյն քան զամենայն
ի բաց բարձումն գերունակութիւն ամենայնի
պարզաբար արձակեցելոյ եւ անդր քան զբոլորսս[34]:

Գ. Օրհնաբանական աղոթքը, ապոֆատիկ եւ կատաֆատիկ ապտվածաբանությունը Գրիգոր Նարեկացու երկերում.- Արեոպագիտյան ապտվածաբանության այս վերին մակարդակը՝ խորհրդական ապտվածաբանությունը, ինչպես եւ նախորդ ապրիճանները, արտահայտված է Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ: Այստեղ եւս հանդիպում է Աստծո՝ իբրեւ սրբազան խավարի, անմատույց լույսի ըմբռնումը, որի աղբյուրն, անկասկած, Դիոնիսիոսն է:

Ինչպես նշել ենք, իր այս երկում Դիոնիսիոսը փալիս է հաստատող եւ ժիտող ապտվածաբանության (այսինքն՝ օրհնաբանական աղոթքի) նման շարքեր, որ հետագայում ուղեցույց եւ ընդօրինակման առարկա են դարձել միջնադարյան միստիկ բանաստեղծների համար: Արեոպագիտյան ապոֆատիկ եւ կատաֆատիկ ապտվածաբանության, օրհնաբա-

33 Անդ, էջ 224:
34 Անդ, էջ 229-230:

նական աղոթքի այս եղանակներն ի հայտ են գալիս առավելապես Գրիգոր Նարեկացու «Մատեանում», ուր կան նման ամբողջական շարքեր ու գլուխներ: Նրա բանաստեղծական բնագրերում այս երկու եղանակներն ավելի հաճախ հանդես են գալիս միահյուսված:

Գրիգոր Նարեկացին արդեն իսկ իր սկզբնական շրջանի գործերից մեկում՝ «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում իրար է հյուսում արեռպագիտության բնագրերում հանդիպող ժիտողական ու հաստատող, դրական աստվածաբանության «գերանունությունները».

«Եւ արդ այս է ճշմարիտ հաւատոյ դաւանութիւն: Հաւատալ զԱստուած Հայր՝ էութիւն ճշմարիտ, զոյ կատարեալ, անեղ, անսկիզբն, անժամանակ, անպատճառ, անիմանալի, անտեսանելի, անճառելի, անհաս, պարզ, անզնին, անկէտ, անսահման, աներբ, անուր, անբովանդակելի, անայլայլելի, անփոփոխ, գերաբուն, գերազոյ, գերալոյս, գերանճառն[35]:

Ահա մի հատված «Մատեանից».

Փառաւորեալ, անքնին, ահեղ, ահարկու,
Սոսկալի, հզաւր, սաստիկ,
Անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անիմանալի,
Անճառելի, անտեսանելի, անզննելի, անշաւշափելի,
Անորոնելի, անսկիզբն, անժամանակ,
Անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն,
Ճշմարիտ էականութիւն, բարձր եւ խոնարհ,
Աւրհնաբանելի զոյութիւն, անսրուեր ծագումն,
Ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս,
Անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ,
Անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն,
Ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան,
Հաստիչ հոգւոց հաց, աւտար մթութեանց սէր, աներկբայ խոստումն,
Ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ... (բան Գ, ա)

Աստվածաբանական նշված եղանակներն այս հատվածում հանդես են գալիս զուգորդված, համատեղ՝ ծառայելով նույն նպատակին: Նարեկացին հիշատակում է հաստատող՝ կատաֆատիկ «աստվածանունության» կերպը՝ «դրականապէս անուանագրութեամբ»:

«Մատեանի» բազմաթիվ գլուխներում եւ հատվածներում կան գոհաբանական աղոթքի շարքեր, ուր միանում, միահյուսվում են նշանական, տարփողական եւ խորհրդական աստվածաբանությունները, որոնք Նարեկացին անվանում է «մաղթողական բանաստեղծութիւն, գոհաբանական աղերս, գոհութիւն՝ խառնեալ ընդ աղերս, երգաձայնութիւն» եւ այլն:

Ինչպես նշել ենք, Գրիգոր Նարեկացին իր օրհնաբանությունները ներհյուսում է մարդու աստվածանմանության միստիկ տեսությանը՝ անցում կատարելով մեկից մյուսին: Բան ԺԹ-ում կարդում ենք.

Անհաս մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի...

35 «Մատենագիրք Հայոց», ԺԲ, էջ 1024:

Ազդումն խնկելի ...
Էութիւն փառապրելի, գոյութիւն աւրհնաբանելի...
Լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզաւր, երկնային:
Եւ այժմ զլուծեալ եւ զիտրպակեալ հողանիւթ անաւթս
Ասպուածաւրէն հրաշակերպութեամբ, աղաչեմ, գթած, նորոգ
հասպապեա՛,
Զքոյին պատկերս մեղաւք հնացեալս
Ի քրայս հալոցաց կայծակամբ բանիդ,
Պաղատիմ առ քեզ, վերսպին ձուլեա՛,
Զիսախտեալ շինուածս քումդ հանգստեան խորանի մարմնոյս...
Ի բնակութիւն քեզ մաքրագործեա՛: (ԺԹ, ա)

Նման օրհնաբանությունները սոսկ վերացական թվարկումներ չեն, մտքի վերացարկող աշխատանքին այստեղ միահառնված է նաեւ զգայական-զգացմունքային շերտը, որով նրանք ներհյուսվում են ջերմեռանդ աղոթքին՝ վերածվելով աղերս-մաղթանքների, որոնցում նշմարվում է Աստծո հետ անմիջնորդ կապի, այդ միության կենդանի զգացողության հարակայող տեսիլքը: Եւ այստեղ էական են դառնում այն բնորոշումները, որոնք նշում են այդ կապը. Աստծո էական հատկանիշների մեջ շեշտվում են նրա ազդեցության, ներգործության, շնորհատվության, աղոթողի հետ անընդհատ կապի, հրաշագործության արարչական զորությունները, արվեստի հրաշքները: Աստված համարվում է «համբուրելի խօսք, սքանչելի ազդում» (ԻԸ, է), «Բարձրութեան պատկեր, բերկրութեան բարբառ» (ԾԷ, ա):

Այս թվարկումների մեջ անգամ ուրվագծվում է «Մատեանի» ստեղծման կենդանի ընթացքը, որն իրականանում է աստվածային ներգործությամբ, որը ներշնչում, ազդում է բանաստեղծի վրա, բայց նաեւ սանձում է նրա ստեղծագործ դարերքը, դպավորում, ամփոփում, «արձանացնում» է նրա խռովահույզ ընթացքը.

Բարեբանեալ Աստուած երկնաւոր...
Փոխարկիչ կարեաց... յարմարիչ բանից,
Սանձարկու լեզուի, շրջադրութիւն շնչոց, կացուցիչ հագագի,
Ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց...
Որ... իմաստութեամբ նուաճեալ, առ քեզ դարձուցանես: (Ղ, ա)
Ճանապարհ կենաց,
Որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին...
Յուսոյ կերպարան,
Ճշմարիտ առհաւատչէիս աղաչողաց մատանց յայտնի երեւեալ...
Ազատութիւն շնորհաձիր...
Որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց: (Ղ, բ)

Բանաստեղծը «հեղում է» իր անվանաշարերը, որ չեն հագեցնում իր «բառային քաղցը», քանզի անկարող են մարդկային խոսքը եւ հոգու իղձերն արտահայտել անարտահայտելին:

Անպակաս լրութիւն...
Տենչալի փուր, անձկալի ձիր,
Բաղձալի բերկրութիւն...
Ամէնարուեստ բժիշկ, անսասանելի հաստատութիւն...
Լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյցք, աւրհնութեան անձրեւ...
Շարժարան շրթանց, ազդումն բանի, կառավար անձին,
Բարձումն բազկի, ձգտումն ձեռին, երասանակալդ սրտի,
Ընտանի անուն, մերձաւոր ձայն,
Կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի,
Խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ,
Խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառաց դուռն,
Ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդուղք:
Եւ այլ բազմութիւն **բանից գովեստից**
Զոր ո՛չ բերէ բերան երկրածին
Եւ ո՛չ տանի գործի մարմնեղէն,
Եւ ո՛չ կշռեն իղձք հոգեղէն: (ԼԲ, գ)

Այստեղ դարձյալ Նարեկացին խոսում է աստվածային ձիրքի, ներշնչանքի, շնորհված խոսքի մասին, որ բանաստեղծի շուրթերի շարժարանն է, նրա ազդեցությամբ են ձեռքերն առ բարձրյալը բարձրանում:

Աստված ներկայանում է իբրեւ գերագույն արվեստագետ, ամենարվեստ արարիչ, որ արարման շնորհով է օժտում նաեւ բանաստեղծին, մասնակցում նրա ստեղծագործությանը:

Լի՛ց նուագաւք այսր մատենի...
Եւ զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զարացո՛:
Միասցի՛ կնիքդ լուսոյ ի գեղ տեսակիս...
Արուեստդ հրաշից ի ճակատիս շո՛ւք նշանակեսցի: (ԿԵ, բ)
Կենաց աւետիս, կէտ տէրունի... ճշգրիտ պատկեր...
Զարաւոր, հնարաւոր, ամէնարուեստ... (ԻԸ, ե)

Աստծո բարձրագույն անվանումներին ավելանում են «ամենահնար արվեստագետը, երկնային ճարտարապետը, արծաթագործը» (Բան ԿԹ, ա), ամենարվեստը, վարդապետը (ՀԶ, բ), մատենագիրը, որը գրում է բանաստեղծի հոգու ոսկեղեն տախտակի վրա (ԼԴ, ժ): Այսպես, այս թվարկումների ընթացքում, որ արթնացնում, սրում են բանաստեղծի միստիկ աստվածազգացողությունը, շարունակվում է նաեւ նրա անմիջնորդ զրույցն Աստծո հետ: Սահմանները ջնջվում են, բանաստեղծի եսը միախառնվում է Աստծուն, Աստված ինքն է, ասես, արարել «Մատեանը», եւ բանաստեղծը խնդրում է նրան՝ հանուն իր հանդեպ տածած սիրո, ողբերգության մատյանում հիշել եւ ներել նաեւ թշնամիներին:

Յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան
Եւ զոր ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ի բարի,
Եւ արա կատարեա՛ նոցին քաւութիւն եւ ողորմութիւն:
Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ, Տէր,
Իբրեւ զսուրբս բամբասողաց,
Առ յաճախ սիրոյդ, որ ի յիս... (ՁԳ, ա)

Բանաստեղծը շեշտում է սրբի իր համարումը եւ աստվածային սերն իր հանդեպ:

Այդ ոգով էլ նա ավարտում է իր «Մատեանը»՝ խնդրելով Աստծուն իր ամենազոր խոսքով լրացնել իր խոսքի թերություններն ու վրիպումները:

Արեգակն արդար, ճառագայթ աւրհնեալ...
Եւ արդ, զթերութիւն վրիպանաց բազմասխալ ձայնի եղկելոյս,
Ամենազաւրդ բանիւ լցեալ,
Մատուսցե՛ս յաղերս հաճութեան Հաւր քում բարձրելոյ... (ՂԵ Ա)

Դիոնիսիոսի խորհրդավոր բնագրերը սնել են Նարեկացու բանաստեղծական աշխարհը՝ զարկ տալով բանաստեղծական անանց երեւակայությանը, մտքի թռիչքին:

Խորհրդավոր մտքերի, պատկերների ստեղծագործական զորեղ ներուժն արտահայտված է Գրիգոր Նարեկացու երկերում: Ավելին, դրանք էական ազդեցություն են թողել նրա պոետիկայի եւ բառաշխարհի կազմավորման եւ զարգացման վրա, սնելով նրա բառաստեղծման տարերքը, մղելով նրան անընդհատ նորաբանությունների:

Այդ խորհրավոր բանաձեւումները, բանական աշխարհի վերամարմնավորումներն ու տեսիլքները նրա առաջնորդիչ գաղափարները, ստեղծագործական սկիզբներն են հանդիսացել: Դրանք նաեւ բանալիներ են՝ բանաստեղծի խորհրդավոր աշխարհը թափանցելու համար:

Այդ խորհրդավոր բնագրերը, նրանցում արծարծված գաղափարները ծառայում են հեղինակի ստեղծագործական խնդիրներին, երկի բուն նպատակին, ներհյուսվելով, իբրեւ օրհներգություն եւ փառաբանություն, աղոթասացությանը՝ օրհնաբանական աստվածաբանությանը՝ ըստ Դիոնիսիոսի: Այդօրինակ հատվածներն ու թվարկումները՝ մտային հայեցողությունից, մտավոր վերառաքումից բացի, Նարեկացու բնագրերում ունեն նաեւ հուզական-զգացմունքային ազդակների գործառույթ. դրանք նախապատրաստում են բանաստեղծին հոգեւոր վերառաքման վերին օղակին՝ էքստատիկ աստվածաբանությանը, որը հոգեւոր զգացմունքի բարձրագույն աստիճանն է: Պատահական չէ, որ հաճախ այդ աստվածանուության շարքերին հաջորդում են բանաստեղծի ամենահնտիմ խոստովանությունները եւ բանաստեղծական ներքին փորձի բացահայտումները:

Այսպիսով, Գրիգոր Նարեկացու երկերն ի հայտ են բերում նրա ստեղծագործության խոր աղերսներն արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության բոլոր շերտերի հետ,

որոնք լիակատար արտահայտություն են գտել նրա բանաստեղծական ծիրում: Այդ աստվածաբանության ստեղծագործական յուրացումը սկսվել էր արդեն Խոսրով Անձևացուց, յուրովի զարգացում ապրել Անանիա Նարեկացու գործերում ու բանաստեղծություններում, սակայն առավել ամբողջական, համապարփակ կիրառվել է Գրիգոր Նարեկացու «Մատեանում» ու պաղերգության մեջ: Արեոպագիտյան բնագրերի նմանօրինակ ազդեցության, բանաստեղծական փորձի մեջ ներառման եւ լիակատար արտահայտման փաստի մենք չենք հանդիպում հայ միջնադարյան տեսական մտքի եւ բանաստեղծության մեջ:

«Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ».- Դիոնիսիոս Արեոպագացու տեսական համակարգի զորեղ ազդեցությունը նկատելի է հատկապես «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ» երկի վրա, որի բնաբանն է «Հայեա՛ց յանձն քո...»: Այն սկսվում է «մեծն Դիոնիսիոսից» մի ընդարձակ քաղվածքով, որ նրա ողջ փիլիսոփայական-գոյաբանական համակարգի մի խտացված բանաձեւումն է: Դիոնիսիոսի նման, Գրիգոր Նարեկացին եւս այդ համակարգը դարձյալ ներառում է գոհաբանական, օրհնաբանական աղոթքի ոլորտ: Իր ճառի մի այլ հատվածում, որն ուղղակի առնչվում է վերոնշյալի հետ, նա խոստովանում է, որ Սուրբ Հոգուց շնորհ, լեզու է ստացել՝ բարբառելու աստվածային բոլոր գոյերի, տարերքների եւ ողջ մարդկության փոխարեն: Սա բխում է Դիոնիսիոսի նշված ուսմունքից, ըստ որի աստվածային ողջ նվիրապետությունը, ողջ տիեզերքը՝ աստվածային էակներից մինչեւ բնության ամենաչնչին արարածները՝ ներթափանցված են աստվածայինով:

Զուգադրենք «Ճառի» նշված երկու հատվածները.

«Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք սեռն եւ յստակ սիրոյ նորա եւ անմեկնելի եւ անորոշելի են յարարելոցն յիրմէ՝ լուսաշարժ եւ բարեբուղխ ստեղծելոցն յառաջնոցն մինչեւ ի հուսկ յետին յարարածս, որք բոլորովին անշունչք են եւ անշարժք. ըստ մեծին Դիոնիսեայ Արիսպագացւոյ՝ յոր հայել ոք ի խաւսնոց մտաւորաց՝ ոչ է արժան յուսահատութեամբ զինքն արտաքոյ դնել մասին այցելութեան Աստուծոյ...:

Ցաղագս որոյ ընդ իս առեալ զբոլոր գոյսս ի մասունս բաժանելով եւ ի ստիքս[36] կոտորելով, քան զկիսրուածս մանրութեան հատոյ մանանխոց, տալով բնաւիցն խաւսուն լեզուս՝ եւ ամենեքումբ գոհանամք զնմանէ, որ եւ ինձ ի վայելս զայս ամենայն ...՝ առնուլ զաղաւթս եւ զարիւնութիւն աղեկիգեալ սիրալի, եւ աստուածագութ խնամոցն... Եւ ջեռուցանել զջերմ եւ զեռանդնուտ սիրտս ձեր՝ բորբոքել սիրով, զոր պարտին արարածք՝ Արարչին...»[37]:

Բանական մարդն անմասն չէ այդ աստվածային, տիեզերական արարչագործությունից՝ աստվածային էություններից մինչեւ հետին արարածները, եւ դեպի այն պետք է ուղղվի նրա հայեցողությունը, եւ այդ հայեցողության, աստվածատուր ձիրքի, խոսքի շնորհիվ բանաստեղծն աղոթում է եւ օրհնաբանում է Աստծո խնամակալության տակ գտնվող բոլոր գոյերի, բնության տարերքների, արարածների եւ համայն մարդկության փոխարեն, որոնք Աստծո «լուսաշարժ եւ բարեբուխ» ստեղծագործության արդյունք են:

Վերոնշյալ հատվածների հիմքում Դիոնիսիոսի հիերախիկ տեսությունն է, որը էական է նրա գոյաբանական համակարգում՝ ըստ դրա՝ աշխարհում ամեն ինչ կապված է Առաջնամիակի՝ Աստծո հետ, նրա ստեղծագործությունն է եւ լուսեղեն բխման արդյունք լինելով՝

36 Ստիք բառը, ի թիւս այլ իմաստների, բնութեան **տարր եւ տարերք** է նշանակում (տե՛ս «Նոր Հայկազեան բառարան», հ. II, էջ 746):

37 «Մատենագիրք Հայոց», Ժ, էջ 1040, 1042:

գտնվում է հավերժական շրջապտույտի մեջ՝ հրեշտակներից մինչեւ ամենահետին արարածները: Այս տեսությունն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել հատկապես Գրիգոր Նարեկացու գրաղերում: Այս առումով Գրիգոր Նարեկացին մեծ նորարար է, քանի որ ոչ միայն ստեղծագործաբար յուրացրել, այլեւ կիրառել է այդ տեսությունն իր ստեղծագործական հղացքների մեջ՝ իբրեւ միստիկ բանաստեղծ հասնելով զարմանալի խորքերի ու ներթափանցումների:

Երկի մեջ հստակ անդրադարձներ կան Դիոնիսիոսի երկնային եւ երկրային քահանայապետությունների եւ նրանց կապի, մարդու՝ իբրեւ այս ասպիճանակարգության հանգույցի եւ աստվածային էության մասին տեսություններին:

Համեմատենք «Ճառի» եւ արեոպագիտյան բնագրերի այլ հատվածներ.

«Այսուհետեւ դարձուսցուք զիմանալի աչս մեր ի մեզ՝ հայելովն ի վեր, ի բարձունս բարձանց, եւ ի յերկինս երկնից եւ ի սուրբն սրբոց, որ անդր է քան զիմանալի գաւառն հրեղինաց, ուր միայնակն Ամենասուրբ Երրորդութիւնն շրջի՝ զամենայն արարածս՝ արտաքս թողեալ առաջին վարագուրաւն զիմանալիսն յինքեանէ, եւ երկրորդաւն զմեզ ի նոցանէ, զոր եւ աստուածաբանեալ փառաւորեսցուք աստուածաբան փառատրութեամբ աւրհնելով զնա յերիս երեւեալ երեսսս անձինս...»[38]:

«Եւ զամենայն սրբազան աւրհնաբանութիւն աստուածաբանիցն գտցես առ ի բարեբար յառաջածնութիւնն աստուածպետութեանն յայտնաբանապէս եւ աւրհներգաբար յաւրինեալ...

Իսկ այժմ համեմատարար ի ձեռն սրբազանից վարագուրից զասացելոցն եւ զքահանայապետականաց աւանդութեան մարդասիրութեանն՝ զգալեաւքս զիմանալիսն եւ զոյիւքս զգերագոյնսն ծածկելով, եւ կերպաւորութիւնս եւ գաղափարս եղեալ անկերպիցն եւ անտպից, եւ զգերաբունն եւ զանձեն պարզութիւնն զանազանութեամբ բաժանականացս նշանակաց բազմացուցեալ եւ ստեղծեալ»[39]:

Ինչպես տեսնում ենք, «Ճառում» եւս աստվածաբանությունը, փառատրությունն ու օրհնաբանությունը շաղկապված են իրար իբրեւ միեղեն հորինվածք եւ բնագիր:

«Ճառ լուսոյ խաչի».-Վերոնշյալ «Ճառում» արծարծված գաղափարներն իրենց գեղարվեստական մարմնավորումն են գտել նաեւ Նարեկացու «Ճառ լուսոյ խաչի» ներբողում, որի նախադրության մեջ Գրիգոր Նարեկացին մեկնաբանում է Եսայու մարգարեության մի հատվածը. «Զերկին աթոռ իմ եւ զերկիր պատուանդան ոտից իմոց» (Ես. ԿԶ. 1), փորձելով բացահայտել պատկերի «երկկերպեան» իմաստը. այն է՝ ինչպես են մարդու մեջ միացել «հողազանգուած միեղենութիւնն» ու «անյաւդական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն», այսինքն՝ աստվածային էությունը:

«Վասն զի հրաշազնին զաւրութիւն ընդգրկեալ ի կայս կրաւորական երկկերպեան պատկերի իւրոյ բանիս տեսութիւն, եւ որպէս մարմնոց շարընթացելոց ի յոքունց նիւթոց ի միեղինութիւն հողազանգուած մասանց մսեղեաց զանուանակն քանակութեան չափաբերական բարբառով կշռեաց: Իսկ անյաւդական եւ լուսանշոյլ պայծառ պարզութիւնն զիա՞րդ ըստ այսմ նմանութիւն մասին ձեւասցի»[40]:

38 Անդ, էջ 1068:

39 Դիոնիսիոս, էջ 131-132:

40 Տես «Մատենագիրք Հայոց», ԺԲ, «գներբողենիս ճառ լուսոյ խաչի», էջ 930:

Աստվածային գերալիր էությունը խառնված է, հոդակցված է զգայական աշխարհին, գոյության ստորին աստիճաններին (իր տաղերում Նարեկացին օգտագործում է այս առումով **էակցված** եզրաբառը):

«Ապա խոստովանեալ՝ միշտ հաւատացի յաւարտումն գերալրութեան էութիւն նորա, եւս եւ ի ստորինս կոյս ծանուցեալ յաղագս խառնութիւն նորին»[41]:

Աստվածայինով ներթափանցված կյանքի այս գաղափարն է, ահա, Գրիգոր Նարեկացու ներբողի եւ օրհնաբանությունների հիմքում:

Ողջ բնությունը, անտառն ու բույսերն են Արարչի հայտնությունից, նրա «կենսաբեր գալուստից» **«հոգեպէս»** ցնծում եւ հրճվում, անձայն բարբառով, անիսս շուրթերով փարփողելով Նրան («բազմադրուագ ձայնիւ նուագեն»): Եւ բանական մարդն է՝ Էի պատկերն ու օրինակը, «երանությամբ» գլխավորում այդ համատիեզերական «բիսող երգաբանությունը», Արարչին եւ իր արարչագործությունը: Ինչպես տեսնում ենք, ամեն ինչ դարձյալ հանգում է աղոթքին, օրհնաբանությանը, երգաբանությանը:

«Եւ ըստ այլասեռն զարմի՝ ծառք բուսոյ բնաւին անտառաց համայն հրճուանաւք խրախուսեալ ցնծան հոգեպէս՝ գյայտնութիւն երեւման Հաստչին ծանուցեալ» (տե՛ս Սաղմ. ՂԷ. 12-13):

«Եւ արդ, եթէ այսոքիկ ստեղծուածք փոքունք մեծն արարչութեան վայելչական եւ բերկրապարն լրութեամբ զՏնկաւղին եւ զՀաստողին կենսաբեր գալուստն ի բարբառ անձայն անբան բերանոյ, եւ ի ձեռս անյայտս անտիպ տեսակի, եւ յոտս անբերողս բնութեանն բարձից բազմադրուատ ձայնիւ նուագեն, քանզի թէ գիրն ստուերականն պատճառ փառաց անեղին պատուի, իսկ խաչին երեւեալ նշան՝ ամենայնիւ բանիւ ներբողեալ եւ ծածկեցեալ փառացն յայտնաբան...

Քանզի յայսքանեաց շնորհաց հաջորդեալ եւ երանութեամբ միշտ գլխաւորեալ, ապա զո՛րպիսի ըղձական զնուիրեալ ձայն ընձեռեսցէ բանականս մարդ՝ ունող զաւրինակ Էին պատկերի: Նա զի եւ հոլովումն յաղուածոյ բիման երգաբանութեանս...»[42]:

Համեմատության համար մեջ բերենք հատվածներ Դիոնիսոսի երկերից.

«Այդ զի՞արդ զնա աստվածաբանքն որպէս զզաւրութիւն աւրհնաբանեն... կամ զի՞արդ առցուք ի վերայ նորա զհզաւրանունութիւնն...

Յառաջ գայ ... զաւրութիւն եւ ի մարդիկ, եւ ի կենդանիս, եւ ի տունկս, եւ ի բոլորն ամենայնի բնութիւն: Եւ զաւրացուցանէ զմիաւորեալսն առ միմեանց սէր եւ կցորդութիւն...

Եւ զամենեցունց կարգս եւ բարեդրութիւնս ի յիւր բարին հաստատանէ, եւ զանմահսն կենդանիս հրեշտակականացն միութեանց անբիծս պահէ, եւ զերկնայինսն եւ լուսաւորականս եւ աստեղացն էութիւնս եւ կարգս անայլայլելիս՝ եւ յաւիտեան զոլ տայ զաւրութիւն...

«Եւ զմիմեամբք յաղաւորութիւն տարերցս եւ խառնումն անշփոթելի եւ անանջատելի, եւ զհոգւոյ եւ մարմնոյ շաղկապութիւն շարունակէ, եւ զտնկոց սնդղականսն եւ աճողականս զաւրութիւն եւ վեր շարժէ: Եւ ունի զգոյեղէնսն զաւրութիւնս բոլորիցս, ... եւ զնոյն աստուածանալն պարգեւէ՝ զաւրութիւն շնորհելով աստուածացելոցն»[43]:

«Արդ՝ զայս ամենայն ի վերայ գերազանցեալ պատճառին արձակաբար է աւրհնաբա-

41 Անդ:
42 Անդ, էջ 930-931:
43 **Դիոնիսիոս**, էջ 198-200:

նելի, եւ ասելի է գերունակ սրբութիւն, եւ փիրութիւն, եւ թագաւորութիւն գերակայ եւ պարզ ասպուածութիւն: Քանզի ի նմանէ միով եւ ի միասին բնաւորեցաւ եւ բաշխեցաւ ամենայն անխառն սրուգութեամբ. ամենայն յսրակ մաքրութեան ամենայն էիցս կարգաւորութիւն եւ զարդ, զանյաւդաւորութիւն եւ անհաւասարութիւն, եւ անչափութիւն ի բաց արտաքսեալ...

Եւ վասն զի գերալիր է ամենայնիւ ամենայնի պատճառ ըստ միոյ քան զամենայն գերունակ գերազանցութեանն՝ Սուրբ Սրբոց աւրհնաբանի եւ զայլսն ըստ գերաբուղխ պատճառին եւ արտաքս համբարձեալ գերունակութեանն»[44]:

Ինչպես տեսնում ենք, բնագրերի «միեղենությունն» այստեղ եւս ակնհայտ է՝ գաղափարական նույնությունը տեղ-տեղ հասնում է բառցի համընկնումների:

***

Նարեկյան դպրոցի ձեւավորման եւ զարգացման ընթացքի վրա խոր ազդեցություն թողած նորպլատոնական սկզբնաղբյուրների մեջ են Դիոնիսիոս Արեոպագացուն վերագրվող երկերը: Համեմատությունը վեր է հանում Նարեկյան դպրոցի տեսական համակարգի՝ հատկապես գոյաբանության, էքստատիկ աստվածաբանության, բարոյագիտության եւ գեղագիտության կապն այդ աստվածաբանական երկերի հետ, որոնք ընդգծված գեղագիտական ուղղվածություն ունեն: Այդ զորեղ ազդեցությունն առկա է նաեւ արվեստի տեսության եւ բուն ստեղծագործության ոլորտներում, ուր դպրոցի ներկայացուցիչները զարգացնում են արեոպագիտյան գաղափարները:

Դիոնիսյան տեքստերը միստիկ-բանաստեղծներին եւ արվեստագետներին ազատ մտածողության եւ ստեղծագործության անսահմանափակ հնարավորություններ էին ընձեռում, որի բացարձակ արտահայտություններից է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը:

Ստեղծագործող անհատն, ըստ այս տեսությունների, գտնվում է արարչագործության, մշտագեղուն հաղցման ծիրում, ուր գերագույն նշանակություն է ստանում նրա ստեղծագործ տարերքը: Հիացումը, զարմանքը, սքանչացումը, սերը, հոգեւոր տարփանքը նրա համար սոսկ հասկացություններ ու վերացական գաղափարներ չեն, այլ աստվածային ներգործուն սկիզբներ, կենդանի կապի, անմիջնորդ հաղորդակցության ձեւեր: Դրանք շաղկապված են աստվածային արարման եւ ներդաշնակության գերագույն սկիզբներին՝ Բարուն, Ազնիվին, Գեղեցիկին, որոնցով ներթափանցված եւ ներդաշնակված է համաշխարհը:

Առկա փաստերի հիման վրա կարող ենք ասել, որ արեոպագիտյան բնագրերի ստեղծագործական յուրացման, խորքային ընկալման ու գեղագիտական-գեղարվեստական վերամարմնավորման այնպիսի երեւույթ, ինչպիսին Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն է, չի հանդիպում ողջ հայ միջնադարում՝ եւ՛ խորքային, եւ՛ ծավալային իմաստով, քանի որ նրանցով ներթափանցված են Գրիգոր Նարեկացու բոլոր երկերը եւ հատկապես բանաստեղծական քերթվածները:

Արեոպագիտյան աստվածաբանության այս գաղափարները, որոնք, ինչպես նշեցինք, ընկած են միջնադարյան միստիկ ուղղությունների եւ Վերածնդի աստվածաբանության ու գեղագիտության հիմքում, առավել արտահայտված եւ բացահայտված են հեղինակի «Յաղագս աստուածայնոցն անուանց» եւ «Յաղագս խորհրդական աստուածաբանութեան»

44 Անդ, էջ 218:

երկերում, ուր հստակ ուղի է նշվում հատկապես արևելաքրիստոնեական միստիկայի բարոյագիտական-գեղագիտական ուղղության համար (կարծում ենք՝ այս ուղղության բարոյագործնական անվանումը, գոնե հայ իրականության մեջ, լրիվ չի արտահայտում նրա կիրառման հոգևոր ոլորտները): Վերը նշված գաղափարները, ինչպես եւ արվեստի տեսության, նրանում խոսքի նշանակության, ստեղծագործական ազատության, աղոթքի նշանակության, զգացմունքային-հոգեւոր էքստազի կարեւորագույն սկիզբներն ու սկզբունքներն են շեշտվում, ինչպես նշել ենք, նշված երկի «Զի՞նչ է աղաւթից զաւրութիւն...», «Յաղագս բարւոյ, լուսոյ, ազնուի, փոփման, զարմացման...», «Յաղագս ազնուի», «Յաղագս զարմացման», «Յաղագս իմաստութեան, մտաց, բանի, ճշմարտութեան, հաւատոյ» եւ բազմաթիվ այլ գլուխներում:

Դիոնիսիոսը տարբերակում եւ ներհյուսում է իր «քրիստոնեացված նորպլատոնականության» աստվածաբանական համակարգի բոլոր ուղղությունները՝ բաժանելով դրանք աղոթքի տեսության (որի մասն է օրհնաբանական աստվածաբնությունը), նշանակական (խորհրդանշանային) աստվածաբանության, փոփոխական (էքստատիկ) աստվածաբանության եւ վերջապես խորհրդական (խորհրդապաշտական) աստվածաբանության, որն իր մեջ ներառում է ճառելի (դրական, կատաֆատիկ) եւ անճառելի (ժիտոդական, ապոֆատիկ) օրհնաբանության եղանակները:

«Մատեանում», ինչպես նշել ենք, Գրիգոր Նարեկացին այս սկզբունքները հասցրել է գերագույն կառուցիկության եւ կոթողայնության: Բացարձակ առումով՝ Գրիգոր Նարեկացու բանաստեղծական տեսիլքը կապված է նորպլատոնական-արեոպագիտյան էքստատիկ աստվածաբանության հետ: Նա բացարձակացրել է նաեւ խոսքի աստվածային էության եւ զորության մասին պատկերացումները:

Գրիգոր Նարեկացու սրբազան տեսիլքների բացահայտումները «Մատեանում» եւս կապված են Դիոնիսիոսի հետ (տե՛ս Հեռոթեոսի՝ Աստվածամոր մարմնի հայեցողության եւ տեսիլային հափշտակության հատվածը, որի մասին հիշատակել ենք):

Գրիգոր Նարեկացին զարգացրել է Դիոնիսիոս Արեոպագացու գեղագիտությունն իր ստեղծագործության ծիրում՝ վերածելով այն անվերջ ստեղծաբանության, արարման շրջապտույտ տարերքի, հոգեւոր, բանական շարժման մի անվերջ հղացքի՝ անվերջ նորարարության: Նա իր ստեղծագործության մեջ օգտագործել է արեոպագիտյան «պատկերագրության», պատկերընկալման այս խոր հղացքը՝ ներմուծված եւ զարգացած Անանիա Նարեկացու բանաստեղծական արվեստի տեսության ու ստեղծագործական փորձի մեջ, ուր նորպլատոնական ակունքները ներհյուսված են վաղ քրիստոնեական միստիկ աստվածաբանությանը: Նա զարգացնում է այս գաղափարներն իր ստեղծագործության ծիրում՝ ելնելով աստվածային ներշնչանքով արարելու եւ «աստվածաշունչ» երկ ստեղծելու իր բացարձակ գաղափարից: Եւ պատկերներն այստեղ ուղղակիորեն կապվում են խոսքարվեստի, ինչպես բանաստեղծն է ասում՝ «խոսքի զորության արվեստի» հետ:

Խոսքն ավարտենք Գրիգոր Նարեկացու «Ո՞վ է դա» («Հորի գրքի» մի գլուխն է) մեկնությունից մի հատվածով, ուր ի հայտ են գալիս դիոնիսիոսյան օրհնաբանական աղոթքի տեսության պատկերավոր բանաձեւումները եւ հեղինակի բանաստեղծության նորարարական տարերքը:

Արդ, ո՛վ երանելի ժառանգք
Եւ որդիք Վերին Երուսաղէմին,
Եւ մանկունք լուսեղէն եւ պանծալի առագաստի,
Լուարո՛ւք զայս **բան նորասացիկ եւ աւրհնութիւն նոր...**
Եւ ընծայաբերական, եւ պտղաբերութիւն հոգեւոր շրթանց
Եւ ծաղիկ աստուածային մերոց խորհրդոց...
Արդ, զայս նոր ոսկեճաճանչ պսակ եդեալ ի գլուխս ձեր՝
Գոհացարուք զպսակողէն եւ եկայք ընդ մեզ,
Զայնակցեալ փառաւորեսցուք զհիմնարկողն երկնի եւ երկրի...
Իբրեւ հրեղէն լարս՝
Զսուրբ զաւղաթս յերկինս առաքեսցուք...[45]:

Իսկապես, բանաստեղծի «հոգեւոր շուրթերը նորասացիկ խոսք եւ նոր օրհնաբանություն են պտղաբերում՝ իբրեւ հրեղեն լար սուրբ աղոթքներ երկինք առաքելով»:

***

Ամփոփենք. Դիոնիսիոս Արեոպագացու անունով հայտնի երկերը խոր հետք են թողել հայ միջնադարյան մշակույթի զարգացման ընթացքի վրա: Մինչեւ այժմ նշվել են այն ընդհանրություններն ու ազդեցությունները, որոնք ի հայտ են գալիս դրանց եւ Դավիթ Անհաղթի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթեւացու, Վանական վարդապետի երկերում, ինչպես նաեւ, Ստեփանոս Սյունեցուց հետո, այդ երկերի Համամ Արեւելցու, Եսայի Նչեցու, Վահրամ Ռաբունու լուծմունքներն ու մեկնությունները, որոնք շրջանառվել են հայ միջնադարյան դպրոցներում եւ վարդապետարաններում:

Այս ամենին զումարվում է, ահա, Նարեկյան դպրոցն իր մատենագրական մեծ ժառանգությամբ, որը Ժ դ. հայ մատենագրության գերակշիռ մասն է կազմում:

Հավանաբար Նարեկյան դպրոցով, հատկապես Անանիա Նարեկացիով եւ Գրիգոր Նարեկացիով միջնորդավորված, այդ խոր ազդեցությունն անցել է Կիլիկյան դպրոցին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ Դիոնիսիոս Արեոպագացու երկերը զորեղ ազդեցություն են թողել, Ներսես Շնորհալուց բացի, Գրիգոր Տղայի, Ներսես Լամբրոնացու տեսական հայացքների եւ բանաստեղծական արվեստի վրա: Ակնհայտ է այդ ազդեցությունը նաեւ հայ միջնադարի խոշոր դեմքերից Հովհաննես Իմաստասերի եւ Հովհաննես Երզնկացու վրա:

Ազդեցությունների եւ զարգացումների այս վերընթաց ուղին կարիք ունի հանգամանալից ուսումնասիրության:

45 «Մատենագիրք Հայոց», ԺԲ, էջ 508-509: